

# ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՀՀ-ՈՒՄ ԿՈՎԻԴ-19 ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

## ԶԵԿՈՒՅՑԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Երևան, 2021թ.

## Ամփոփում

## Կալանավորումն այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունների առնչությամբ դատական պրակտիկան ՀՀ-ում Կովիդ-19 հիվանդության համավարակի պայմաններում

2020թ. աշխարհում տարածված նոր տիպի կորոնավիրուսային (ԿՈՎԻԴ-19)[1] հիվանդության դեմ պայքարի շրջանակներում հատուկ ուշադրության արժանացավ ազատությունից զրկված անձանց շրջանում հիվանդության տարածումը վերահսկելու և կանխարգելելու՝ պետության պարտավորությունը:

Քրեակատարողական հիմնարկներում նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու նպատակով միջազգային մարմինները, ինչպիսիք են Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը, Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (WHO) և Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակը, ՄԱԿ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը (UN OHCHR), ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC), ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագիրը (UNAIDS), ընդունեցին անհրաժեշտ խիստ միջոցառումների վերաբերյալ պետություններին ուղղված առաջարկություններ և հանձնարարականներ, որոնք վերաբերել են ոչ միայն քրեակատարողական հիմնարկներում և ազատությունից զրկելու այլ վայրերում գտնվող անձանց առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացմանը, այլև գերբնակեցման խնդրի լուծմանը՝ ազատությունից զրկելու այլընտրանքային միջոցների կիրառմանը:

Հաշվի առնելով ՀՀ-ում համավարակի լայն տարածում ունենալը՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակակական կազմակերպության կողմից իրականացվել է հետազոտություն կորոնավիրուսային հիվանդության համավարակի պայմաններում ներպետական դատարանների կողմից խափանման միջոցների կիրառման պրակտիկան, կալանավորման կիրառման հիմքերն ու հիմնավորումները, համավարակի և դրա առաջացրած ռիսկերի գնահատումը և անձանց նկատմամբ կիրառված խափանման միջոցի որոշման հարցում վերջինիս դերը ուսումնասիրելու նպատակով:

Ուսումնասիրություն իրականացնելու նպատակով datalex.am կայքից առանձնացվել և ուսումնասիրվել են հանրորեն հասանելի այն որոշումները, որոնցով 2020թ. մարտի 16-ից մինչև հունիսի 30-ը Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից քրեական գործերի դատական քննության ընթացքում

---

[1] Նոր տիպի կորոնավիրուսային հիվանդությունը հանդիսանում է շնչառական վարակ, արտահայտվելով հիմնականում թոքաբորբով: Վարակված անձանց մեծ մասի մոտ հիվանդության ախտանիշները արտահայտվում են մեղմ կամ չափավոր՝ առանց բարդությունների, սակայն խոցելի խումբանձանց՝ 60 և ավելի տարեկան կամ քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց մոտ հիվանդությունը կարող է դրսևորվել ծանր՝ նույնիսկ հանգեցնելով մահվան:

քննվել են կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունները:

Դատական ակտերը վերաբերում են 2018-2020թ. ընթացքում դատարանի կողմից վարույթ ընդունված քրեական գործերով ամբաստանյալների նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի քննարկմանը: Միաժամանակ, ուսումնասիրվել են ՀՀ դատական դեպարտամենտի կողմից կազմակերպության հարցմանն ի պատասխան տրամադրված տեղեկատվության շրջանակներում ներառված քրեական գործերով ամբաստանյալների նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի վերաբերյալ որոշումներ: Վերջիններս ներառել են այն գործերը, որոնք դատարանների վարույթ են ընդունվել մինչև 2018 թվականը:

Ուսումնասիրության նպատակով առանձնացվել է ամբաստանյալի նկատմամբ կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու հարցի վերաբերյալ որոշում պարունակող 129 գործ, որոնք եղել են 149 անձի վերաբերյալ:

Որոշումները ուսումնասիրվել են հատուկ մշակված հարցաշարի միջոցով, որոնք ներառել են՝

- Ամբաստանյալների անձնական տվյալները (սեռ, տարիք, ամուսնական կարգավիճակ և այլն),
- Քրեական գործը քննող դատարանը և դատավորը,
- Մեղադրողի/պաշտպանի միջնորդությունը՝ ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ,
- Մեղադրողի/պաշտպանի անդրադարձը COVID-19-ի հետևանքով ամբաստանյալին սպառնացող ռիսկին,
- Մեղադրողի/պաշտպանի դիրքորոշումը ներկայացված միջնորդության վերաբերյալ,
- Դատարանի կայացրած որոշումը և դրա հիմնավորումները, հաշվի առնված հանգամանքները և այլն:

Գործերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է եղել առանձնացնել անձանց վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը: Ուսումնասիրված գործերով 149 ամբաստանյալներից 5-ը եղել են իգական սեռի ներկայացուցիչներ, իսկ մնացյալ 144-ը՝ արական սեռի: Ըստ տարիքային շրջանակների՝ 10 ամբաստանյալ եղել է 18-25 տարեկան, 28-ը՝ 26-35 տարեկան, 10-ը՝ 46-55 տարեկան, ընդ որում, 81 անձի առնչությամբ դատական ակտում տարիքի վերաբերյալ որևէ նշում առկա չի եղել:

41 ամբաստանյալ խնամքին ունեցել է անչափահաս երեխա կամ երեխաներ, 19 անձ խնամքին ոչ ոքի չի ունեցել, իսկ 1 անձի խնամքին եղել է հիվանդ հայրը: Մնացյալ 88 անձանց վերաբերյալ դատական ակտում որևէ տեղեկություն առկա չի եղել:

Ամբաստանյալներից 26-ը նախկինում ունեցել է դատվածություն, որոնցից 3-ի դատվածությունը եղել է մարված: 23 անձ նախկինում դատվածություն չի ունեցել, իսկ 8 անձի դատվածության առկայության կամ բացակայության վերաբերյալ դատական ակտում որևէ նշում առկա չի եղել:

Անդրադառնալով դատարաններին՝ պետք է նշել, որ առավել մեծ թվով դատական ակտեր կայացրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (77 անձի վերաբերյալ), Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (22 անձի վերաբերյալ), Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (13 անձի վերաբերյալ), Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (12 անձի վերաբերյալ) և այլն:

Ընդ որում, առավել շատ դատական ակտեր կայացրել են դատավորներ Հ.Մանուկյանը, Վ.Լ.Գրիգորյանը, Ս.Գզոգյանը, Դ.Հարությունյանը, Ա.Հովհաննիսյանը և Գ.Մարգարյանը:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրված որոշումները կայացվել են հետևյալ ժամկետներում. մարտ ամսվա ընթացքում կայացվել է 6 որոշում, ապրիլին՝ 91-ը, մայիսին՝ 36-ը և հունիսին՝ 16-ը:

Ուսումնասիրված 149 ամբաստանյալների վերաբերյալ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կիրառելու միջնորդություններից 91-ը (61%) մերժվել են, իսկ 58-ը՝ (39 %) բավարարվել:

Ամբաստանյալներին ներկայացված մեղադրանքները վերաբերել են հետևյալ հանցագործություններին. գողությունը (32 դեպք) ավազակությունը (14 դեպք), կողոպուտը (6 դեպք), խարդախությունը (22 դեպք), յուրացումը (2 դեպք), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը (25 դեպք), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգությունը (5 դեպք), թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունը (12 դեպքը), սպանությունը (29), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (14 դեպք), ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը (1 դեպք): Մնացած դեպքերը վերաբերել են հասարակական անվտանգությանը, համակարգչային տեղեկատվության անվտանգության, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններին (6 դեպք), հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններին (6 դեպք), տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին (3 դեպք), կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններին (5 դեպք) և պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությանը (1 դեպք):

Անդրադառնալով ներկայացված միջնորդություններին՝ պետք է նշել, որ պաշտպանական կողմը հիմնականում միջնորդությունների հիմքում դրել է համավարակի տարածման արդյունքում առաջացած ռիսկերը, պաշտպանյալների առողջական վիճակը և հիվանդությունները, ամբաստանյալի կողմից հարազատների խնամքին մնացած անչափահասների մասին հոգ տանելու անհրաժեշտությունը, կալանավորման հիմքերին առնչվող ռիսկերի նվազումը, ամբաստանյալների տարիքը, ՔԿՀ-երի գերծանրաբեռնվածությունը, համավարակով պայմանավորված՝ նիստերին ներկայանալու անհնարինությունը կամ դժվարությունները, ՔԿՀ-երում վարակի առկայության դեպքերը կամ պարզապես հղում կատարել ԽԿԿ զեկույցին՝ առանց մասնավորեցնելու կոնկրետ դեպքերը:

Պաշտպանական կողմի ներկայացված միջնորդություններից 9-ի դեպքում միջնորդության հիմքում դրվել է բացառապես անձի առողջական վիճակը:

Մնացած գործերով անձի առողջական վիճակը դիտարկվել է այլ հանգամանքների համատեքստում՝ գնահատելու կալանավորումը այլ խափանման միջոցով փոխարինելու անհրաժեշտությունը:

Ի պատասխան պաշտպանական կողմի միջնորդութուններին՝ մեղադրանքի կողմի առարկությունները վերաբերել են նրան, որ պաշտպանական կողմը չի ներկայացրել փաստարկներ իրենց պաշտպանյալների խոցելի խմբում գտնվելու կամ առողջական այնպիսի խնդիրներ ունենալու մասին, որոնց դեպքում համաճարակի պայմաններում անազատության մեջ մնալը կարող է վտանգավոր լինել վերջիններիս առողջության համար, ՔԿՀ-ները առավելագույն կերպով պահպանում են անձանց մեկուսացումը, ՔԿՀ-ներում չկան վարակման դեպքեր, այդտեղ պահպանվում են սանիտարական պայմանները, չկա գերծանրաբեռնվածություն և այլն: Ինչ վերաբերում է ԽԿԿ զեկույցին, մեղադրանքի կողմը հիմնականում նշել է, որ այն կրում է խորհրդատվական բնույթ և դրանից չի հետևում, որ այն ունի բացարձակ նշանակություն և քննարկվող դեպքում չի կարող չեզոքացնել կալանքի հիմքերը:

Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ մեղադրող դատախազների կողմից 2020թ. մայիսի դրությամբ դատական քննության փուլում գտնվող գործերով կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու միջնորդություններ ներկայացվել են 18 ամբաստանյալի առնչությամբ՝ հաշվի առնելով նրանց առողջական վիճակն ու հիվանդությունները: Միաժամանակ, սակայն, ուսումնասիրությունը փաստել է, որ երբ մեղադրողները առարկել են իրենց կողմից ներկայացված միջնորդությունների հիմքում դրված հիվանդություններին նույնանման համակցված հիվանդություններ ունեցող անձանց խափանման միջոցը փոխելու միջնորդությունների դեմ, այդ թվում՝ շնչառական հիվանդություններ ունեցող անձանց առնչությամբ:

Ըստ ուսումնասիրության՝ դատարանները բավարարված գործերով հաշվի են առել հիմնականում.

1) առողջությամբ կամ տարիքով պայմանավորված՝ անձի խոցելի խմբում գտնվելը և

2) համավարակի արդյունքում դատական նիստերի նշանակման և անցկացման ձգձգումների արդյունքում կալանավորման ժամկետի անորոշությունը:

Որոշ դեպքերում դատարանները կալանավորման հարցը քննարկելիս առողջական վիճակը դիտարկել են գործող օրենսդրական կարգավորումների լույսի ներքո՝ առանց անդրադարձ կատարելու համավարակին և դրանով առաջացած ռիսկին, թեև պաշտպանը բարձրացրել էր այդ ռիսկի վերաբերյալ պնդումներ:

Միևնույն ժամանակ եղել է հաշմանդամություն ունեցող 10-ն անձ, որոնցից 8-ի դեպքում խափանման միջոցը փոխելու մասին միջնորդությունները դատարանի կողմից բավարարվել են:

Ինչ վերաբերում է տարիքին՝ որպես խոցելի խմբին պատկանելու հիմնավորմանը, ապա միայն 3 գործով է, որ անձինք տարիքի հիմքով համարվել են ռիսկային գոտում գտնվող:

Վերլուծելով մերժված միջնորդությունների վերաբերյալ դատական ակտերը՝ կարելի է նշել, որ.

1) դատարանների կողմից միջնորդությունները մերժվել են՝ պատճառաբանելով ամբաստանյալի նկատմամբ կալանավորման շարունակական կիրառման հիմքերի առկայությունը,
2) կորոնավիրուսային հիվանդության համավարակով պայմանավորված ռիսկերը բավարար չեն գնահատվել կալանավորումն այլընտրանքային խափանման միջոցով փոփոխելու համար,
3) երկրում ստեղծված արտակարգ դրությունը որևէ ազդեցություն չունի ողջամիտ ժամկետում գործի քննությունն իրականացնելու գործում:
4) մնացյալ հիմքերի մերժման մասով դատարանների հիմնավորումները հիմնականում կրկնում են մեղադրողների փաստարկները:

Հաշվի առնելով ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև ՀՀ-ում նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության հերթական ալիքի տարածվածության մասշտաբները՝ առաջարկում ենք.

*Վարույթն իրականացնող մարմիններին*

- Ապահովել մեղադրյալի նկատմամբ կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառումը միայն որպես բացառիկ միջոց,

- Ձեռնպահ մնալ ոչ մեծ ծանրության և բռնությամբ չզուգորդված հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց նկատմամբ կալանավորման կիրառման միջնորդություններից,

- Առողջական խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և փոխելու միջնորդությունների առնչությամբ ապահովել միատեսակ պրակտիկայի կիրառություն:

*Դատարաններին*

- Գործել ազատության կանխավարկածով հիվանդության և տարիքի բերումով կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ խոցելիություն ունեցող անձանց, ինչպես նաև ոչ մեծ ծանրության և բռնությամբ չզուգորդված հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց առնչությամբ որոշում կայացնելիս,

- Մեղադրյալի կողմից կոնկրետ հանցագործությունը կատարված լինելու ողջամիտ կասկածը գնահատել և հիմնավորել կոնկրետ փաստերի և տեղեկությունների հիման վրա,

- Բացառել անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի լուծումը՝ հիմնվելով բացառապես անձին մեղսագրվող հանցագործության ծանրության և վտանգավորության վրա,

- Անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի վերաբերյալ որոշումներ կայացնելիս ապահովել որոշումների հիմնավորվածության և պատճառաբանվածության սկզբունքը,

- Անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի վերաբերյալ որոշումներ կայացնելիս ապահովել որոշումների անհատականացվածությունը՝ հիմնվելով անձի անհատական հանգամանքների, այդ թվում՝ առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների գնահատման հիման վրա: